

# ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԽՍԱՆ

## Ա. Զ. ԹՈՅՆԲԻՒ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Ա. Ա. ՔԱԼԱՉՅԱՆ

Քաղաքական գիտությունների թեկնածու,  
ՀՀ սփյուռքի նախարարության գլխավոր մասնագետ

Աշխարհակառուցի մերօյա նոդելների հիմնարար սկզբունքներից մեկը տեղական (լոկալ) քաղաքակրթությունների նկատմամբ «արևմտյան ունիվերսալիզմի» հարաբերության հիմնահարցն է: Այն առավել հրատապ է դարձել XX-XXI դարերի սահմանագծում, երբ «տեղական» հասարակական-քաղաքական միտքը մեկ անգամ և հարկադրված էր այդ հիմնահարցին անդրադառնալ համաշխարհայնացման և դրա հետևանքով արդիական դարձած քաղաքակրթությունների բախման, ինքնության և այլության կոնֆլիկտային իրավիճակների և բազմաթիվ այլ հիմնախնդիրների լուծման դիրքերից, որոնք աստիճանաբար հետին այլան մղեցին «համագործակցության տեսլականը»:

Քաղաքագետները մատնանշում են նաև այն իրողությունը, որ ավելի ու ավելի ուրվագծվող այդ հակադրության արդյունքում մեր օրերում աստիճանաբար առաջնություն է ձեռք բերում քաղաքակրթությունների համագործակցության վրա հենված աշխարհակարգի մոդելը: Մասնագիտական գրականության մեջ այդ տեսակետը հիմնավորվում է նրանով, որ արդի սոցիումների համագործակցությունը առաջին հերթին տեղի է ունենում մշակութային ընդանրությունների հիմնա վրա: Այդ ամենից հետևում է, որ քննարկվող ոլորտում ցանկացած «ունիվերսալիզմի» արժանապետությունը անխուսափելիորեն կարող է բախումնային իրավիճակներ գոյավորել: Նշված տեսակետի հիմնավորման համար մասնագիտական գրականության մեջ առաջարվել են բազմաթիվ փաստականեր: Որպես կանոն՝ դրանք բոլորն էլ հենված են արդի աշխարհաքաղաքական գործընթացների ուսումնասիրության վրա և մատնանշում են այն իրողությունը, որ մի քաղաքակրթությունից (գերազանցապես՝ տեղական) այլ՝ օտար (արևմտյան) քաղաքակրթության սոցիումի տեղաշարժը դեռևս ցանկալի արդյունք չի արձանագրել: Անհերքելի է համարվում նաև այն իրողությունը, որ նշված գործընթացներն առավել ցայտուն տեսք են ստացել համաշխարհայնացման քաղաքականության արդյունքում, քանի որ այդ հարաբերություններում ներառված երկրները համախմբվում են նույնական (իդենտ) քաղաքակրթություն կրող առաջատար երկրների շուրջը:

Քաղաքակրթությունների հարաբերությունները պատմականորեն միշտ էլ հանդես են եկել բազմաթիւ և բազմամակարդակ իրականության տեսքով, որը, որպես կանոն, ուղեկցվել է «արդիականացման» տեսքով՝ դառնալով իրական խաչավորման հիմքերից մեկը: Եվ ինչպես փաստերն են վկայում, այդ գործընթացները սահուն են ընթացել միայն այն պարագայում, երբ շփվող քաղաքակրթությունների հարաբերություններում գերիշխել է գործակցությունը: Միանգանայն այլ է «կանավոր հարկադրանքի» տեսքով «արևմտյան քաղաքակրթական ունիվերսալիզմի» իդեալների և նորմերի տարածման և արմատավորման պարագայում: Չնայած «արևմտականացումը» բազմաթիվ դրական և ուսանելի ար-

Ժերներ է բովանդակում, սակայն առայսօր այն դեռևս չի հանգեցրել ո՞չ «միասնական (ընդհանրական) քաղաքակրթության» ձևավորման և ո՞չ էլ ցանկալի «արևմտականացման»: Վերլուծաբաններից շատերն այդ գործընթացի օրինաշափ և տրամաբանական հետևանքն են համարում նաև այն, որ «արևմտյան քաղաքակրթական ունիվերսալիզմի» ներդրման հետևանքով քաղաքակրթությունների «միախառնման ակնկալիող միտումները» գգալիորեն թուլացել են, իսկ Արևմուտքի հարաբերական ազդեցության աստիճանը՝ աստիճանաբար նվազել: Պատճառն այն է, որ ինքնության պահպանմանը հետամուտ ոչ արևմտյան քաղաքակրթությունները ոչ միայն վերահաստատում են իրենց ավանդական արժեքները, այլև այն հակադրում են արևմտականացմանը:

Աստիճանաբար ընդգծվում է մեկ այլ միտում ևս: Ազգամշակութային ավանդություններին և ինքնությանը հետամուտ սոցիումները դիմադրած են կանգնում քաղաքակրթության, այս պարագայում՝ «արևմտյան ունիվերսալիզմի» գաղափարախոսությանն ու պրակտիկային, որի արդյունքում ձևավորվում են քաղաքակրթությունների բախնան և լոկալ հակամարտությունների մի շարք օջախներ, որոնք առավել ցայտուն տեսք են ստացել Արևմուտք-իսլամ, Արևմուտք-Չինաստան և լոկալ այլ մրցակցությունների տեսքով<sup>1</sup>: Այդ համատեքստում ինքնին հասկանալի է արևմտյան տեսաբանների ծգտումը՝ հիմնավորել «արևմտյան քաղաքակրթական ունիվերսալիզմի» անհակասականությունն ու «համամարդկային բնույթը»: Այդ առաջնահերթությունը, ինչպես նաև համաշխարհայնացման քաղաքականությունը տեսականորեն հիմնավորելու պահանջով արևմտյան վերլուծական գրականության մեջ առաջադրվել և հիմնավորվել են քաղաքակրթությունների գործակցության ձևով տարբեր, բայց բովանդակությամբ նույնական մոդելներ: Այդ բնագավառում «միտում ստեղծող» հեղինակներից պետք է համարել նաև անգիտացի տեսաբան Ա. Զ. Թոյնբիին:

Պատմական գործընթացների յուրատիպ ընթանման դիրքերից անդրադարձնալով այն հարցին, թե ապագայի պատմաբանները ինչը կիանարեն XX դարի առաջին կեսի իրադարձություններից ամենաէականը և առանցքայինը, Ա. Թոյնբին գտնում է, որ դարաշրջանին բնորոշ ծգտումները և փորձը գնահատելիս հետազոտողները պետք է վեր կանգնեն «ժամանակային հեռանկարների չափումից»: Եվ այդ մոտեցումը բացատրում է նրանով, որ քննարկվող դարաշրջանն ամենին էլ չպետք է համարել «սենսացիոն, ողբերգական կամ աղետալի տնտեսական ու քաղաքական իրադարձությունների շրջան», թեև համանիտ է նաև, որ XX դարի առաջին կեսի իրադարձությունները նաև պատերազմներ են, հեղափոխություններ, կոտորածներ, բռնագաղթումներ, սով, ունեցրկում և անկում: Եվ, այդուհանդերձ, նա համոզված է, որ բացասական այդ պահերն ամենին չպետք է գրավեն ապագա պատմաբանների ուշադրությունը, քանի որ նրանց ուշադրու-

<sup>1</sup> Այդ գործընթացի շրջանակներում պետք է դիտարկել նաև «արևմտյան քաղաքակրթական ունիվերսալիզմի» դեմ ուղղված և իր ապակայունացնող նշանակությամբ լուրջ հիմնահարց դարձած իսլամական «ժողովրդագրական պայքունը», ինչպես նաև այն «տեղական» կոնֆլիկտները, որոնք խթանվել են «քաղաքակրթական միևնույն սոցիումների» միավորման հետևանքով: Համաշխարհայնացման արդի քաղաքականության համատեքստում քաղաքակրթությունների բախնան նշված երևույթների մանրամասները տե՛ս՝ *Василевко И. А.* Политическая глобалистика. М., 2000, с. 299-303; Политические системы и политическая культура Востока. М., 2007, с. 6-38:

թյան կենտրոնում պետք է լինի միայն այն, «ինչի մասին մենք լոկ կռահում ենք»: Պարզաբանելով այդ մոտեցումը՝ նա գրում է, որ այն ամենը, ինչն, առաջին պլան դուրս գալով, գրավում է մեր ուշադրությունը՝ պայմանավորված է ոչ թե իր կարևորությամբ, այլ միայն նրանով, որ մենք ուշադրությունը բնեօրում ենք միայն «կյանքի մակերեսին ընկած երևույթների վրա»: Այնինչ, պնդում է տեսաբանը, այդ ոլորտում առանցքային պետք է համարել առաջին հայացքից «անտես ու զգայական ընկալումից դուրս ընկած այն շարժումները, որոնք թեև գործում են իրադարձությունների մակերեսին, սակայն առավելապես կապված են բուն գործընթացների էության հետ»: Այդ իսկ պատճառով էլ հասարակական պատմության բնապատճական ընթացքը լուսաբանող «ընդերքային» այդ երևույթների դերը նա արժենորում է հետևյալ կերպ. «Եվ հասկանալի է, որ վերջին հաշվիվ հենց այդ խորքային, դանդաղ շարժումներն ել իրական հետադարձ մասշտաբ են ստանում, երբ սենսացիոն, բայց անցողիկ իրադարձությունների իրական նշանակությունն իր չափերով և համամասնություններով նվազում է: ... Կարծում եմ ապագա պատմաբաններն այդպիսի իրական համանասնություններով մեզանից շատ ավելի լավ կղիտարեկեն մեր դարաշրջանը»<sup>2</sup>:

Այս պարագայում ակնհայտ է արևմտյան վերլուծաբաններին բնորոշ ընդհանրական այն միտումը, որով հասարակության տնտեսական և քաղաքական կյանքի «անոնալ երևույթները» տեղափոխվում են քաղաքակրթական դաշտ և փորձ է կատարվում այդ երևույթները բացատրել «քաղաքակրթական նոր ունիվերսալիզմի», հատկապես՝ վերջինիս էությունը բնութագրող սոցիոմշակութային իրականության գումարելիներով: Վկայությունը Ա. Թոյնբիի ընդհանրացնող այն պնդումն է, որ ապագա պատմաբանները մեր դարաշրջանի մասին անվերապահ կպնդեն, որ «... XX դարի մեծագույն իրադարձությունը Արևմտյան քաղաքակրթության ազդեցությունն է այդ շրջանում աշխարհում ապրող հասարակությունների վրա: Պատմաբանները կասեն, որ այդ ազդեցությունն այնքան հզոր և ամենաթափանց էր, որ գլխիվայր է շրջել, հակառակ դարձրել իր բոլոր զոհերի կյանքը, առանձին մարդկանց՝ տղանարդկանց, կանանց, երեխաների վարքի, աշխարհայացքի, զգացմունքների և հավատալիքների վրա ազդելով, շոշափելով մարդկային հոգու այն լարերը, որոնք արտաքին նյութական ուժերին չեն արձագանքում ...»<sup>3</sup>: Նա համոզված է նաև, որ հասարակության նախապատմական շրջանից սկսած՝ հանձին «արևմտյան քաղաքակրթության», ժամանակային մասշտաբով այնպիսի արմատական հեղափոխություն է կատարվել, որ եթե այդ էջերի վրա «պատմության մասշտաբային քարտեզ կազմվի», ապա այնպիսի կարծ ժամանակահատված, ինչպիսին հազար հարյուր տարին է, նրանում անզեն աչքի համար գորեթե անտես հատված կրաօնա: Եվ, այդուհանդերձ, տե-

<sup>2</sup> **Тойнби А. Дж.** Цивилизация перед судом истории. СПб., 1995, с. 129: Ի. Կասիլենկոն, հակառակը, համոզված է այն բանում, որ «փրկարար շոկից» գերծ մնացած «... արևմտյան աշխարհը ու ուժուած տարված է եվրոպակենտրոնալության հովերով: Այդ պատրանքը սնվել է արևմտյան քաղաքակրթության երկու և կես դարերի հաջողություններով»: Յենինակը միանգամայն հիմնավոր պնդում է նաև, որ հենց «արևմտյան քաղաքակրթական ունիվերսալիզմի» ամխուսափելի արդյունքն էլ հանդիսանում է այն համոզմունքը, որ «այլ քաղաքակրթությունների դիրքերից հենց արևմտադրն է նույնացվում հովանու մշակույթի կողմանման հետ», տես **Василенко И. А.** Политическая гловалистика, с. 42, 60:

<sup>3</sup> **Тойнби А. Дж.** Цивилизация перед судом истории, с. 129:

սաբանը համոզված է նաև այն բանում, որ արմատական փոփոխություններով ուղեկցվող վերոնշյալ գործընթացն անհնար է պատկերացնել առանց «միջքաղաքական գործոնների» հետադարձ ազդեցության:

Ա. Թոյնբիի աշխատանքների վերլուծությունը թույլ է տալիս փաստել նաև, որ նրա կողմից արևածագության քաղաքակրթությանը վերագրվող «մարդասիրական խաղաղությունը» համարվում է այն միակ երաշխիքը, որի միջոցով միայն հնարավոր կլինի կասեցնել և արժանի հակահարված տալ «նոր բարբարոսություններին» և «ոչ մարդասիրական քաղաքականությանը»: Այդ համատեքստում միանգամայն բնական պետք է համարել հեղինակի ձգտումը՝ արևածագության քաղաքակրթությունը ներկայացնել «միջնականությաին և մարդասիրական հավասարակշրպանության» որակով: Իսկ այս վերջինս, գրում է վերլուծաբանը, օբյեկտիվորեն կպայմանավորի նաև այն, որ ապագայի պատմաբաններին մեծապես կիետաքրքրի նաև այն հակազդեցությունը, որով «զոհերը ազդում են ազրեսորի վրա»: Ահա թե ինչու հասարակության և քաղաքակրթությունների ուսումնասիրության ցիկլային մեթոդաբանության դիրքերից նա գրում է. «... մեր Արևածագության քաղաքակրթությունը, ինչպիսին մենք այն գիտենք միջնադարից սկսած վերջին տասներկու-տասներեր դարերում, կարող է անճանաչելորեն փոխվել այն աշխարհների՝ ուղղափառ քրիստոնեության, իսլամի, իհնուլիզմի և Հեռավոր Արևելքի հակառադիացիոն ազդեցությունների շնորհիվ, որոնց մենք մեր ժամանակին ձգտում էինք կլանել»<sup>4</sup>: Ավելին, նա համոզված է նաև, որ քաղաքակրթությունների զարգացման հիմքում ընկած «շրջադասության» օրինաչափությունները ապագա պատմաբաններին տրամաբանորեն կրերեն այն հետևությանը, թե ազրեսորի որակով հանդես եկող արևածագության քաղաքակրթության, հավասարապես նաև զոհի որակում ունեցող այլ քաղաքակրթությունների տարբերությունները միանգամայն աննշան կլինեն այն պարզ պատճառով, որ «Ազդեցությունները կմարվեն հակազդեցություններով, գլխավորը, ինչը նշանակություն կունենա, մարդկության համար ընդհանուր, միասնական մեծ փորձն է, լոկալ քաղաքակրթությունների հետ բախման դեպքում հասարակական լոկալ ժառանգության կործանման հետ կապված փորձությունը, ավերակների վրա ձևավորված նոր՝ ընդհանուր կյանքի որոնումը»<sup>5</sup>:

Ա. Թոյնբիի համար անառարկելի է, որ արևածագության քաղաքակրթական արժեքների յուրացմանը արդեն իսկ հնարավոր կլինի առանց արմատական ցնցումների կյանքի կոչել «քաղաքակրթական լոկալ արժեհամակարգերի համաձայնեցումը»: Ընդ որում, այդ գործընթացում վերլուծաբանը արևածագության արժեհամակարգերը դիտարկում է որպես «համանարդկային քաղաքակրթական տարածություն և ժամանակ ձևավորվող» գործոն: Արևածագության քաղաքակրթությանը վերագրվող այդ «առանձնաշնորհումներով» պետք է բացատրել նաև տեսաբանի հայեցակարգային այն պնդումը, թե միայն վերջինիս է վերապահված պայմանավորել համընդիհանրացման ապագա զարգացումները և կասեցնել հնարավոր շեղումները: Ա. Թոյնբին համոզված է, որ արևածագության ունիվերսալիզմը «քաղաքակրթական լոկալ արժեհամակարգերին» թույլ կտա վերանայել և փո-

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 130:

<sup>5</sup> Նույն տեղում:

խանակման ճանապարհով չեզոքացնել «հակաարժեքային նախկին ընթանումները», «քաղաքակրթական արժեքների փոխանակության» ոչ համարժեք ձևերը և բացասական այլ երևույթներ: Սակայն դժվար չէ նկատել, որ քննարկվող հայեցակարգում փոխներափակները նշված գործընթացները ներկայացվում են միաբներ, ինչը մերժում է հավասարակշռող ցանկացած նոտեցում: Վկայությունը քաղաքակրթական գարգացումների այլընտրանքային ուղիների մասին Ա. Թոյնբիի այն պնդումն է, թե ապագա պատմաբանների համար անկասկած անառարկելի կիհանարվի այն փաստը, որ հասարակական-տնտեսական և միջմշակութային հակասությունների համահարթեցման գործում քացարիկ և առաջնային դեր է վերապահված Արևմուտքին: Յեղինակն այդ տեսակետը հիմնավորում է հետևյալ տողերով. «... քրիստոնեական դարաշրջանի երկրորդ հազարամյակում ժամանակակից հասարակությունների վրա Արևմտյան քաղաքակրթության ազդեցությունը դարակազմիկ իրադարձություն է, որովհետև դա աշխարհում միասնական համակեցություն և միասնականացում հաստատելու առաջին քայլը է (ընդգծումը մերին է՝ Ա. Ք.)»<sup>6</sup>: Այդ հիմնան վրա է կառուցվում նաև վերլուծաբանի այն տեսակետը, թե ապագայի սոցիումներում «... մարդկության միությունը կընկալվի որպես մարդկային կյանքի հիմնարար պայմաններից մեկը, մի տեսակ բնական աշխարհակարգի մաս, ... և այդ դարաշրջանի պատմաբաններին դժվար կլինի պատկերացնել, իր գոյության առաջին վեց, կամ դրան նոտ հազարամյակների քաղաքակրթության առաջանարտիկների տեղական լոկալ աշխարհայացը»<sup>7</sup>:

Արժեքային այդ նոտեցումն, անշուշտ, էական ճշգրտումների կարիք ունի: Այս պարագայում խոսքն ամենից առաջ վերաբերում է «արևմտյան քաղաքակրթական ունիվերսալիզմ» մասին որոշ վերլուծաբանների «դասական» ըմբռնումներին: Ոչ ոքի համար զաղտնիք չէ, որ «արևմտյան քաղաքակրթական ունիվերսալիզմը», ինչպես նաև հայտնի սահմաններում նրա հետ սերտողեն շարկապված «Եվրոպակենտրոնության» ըմբռնումը դարձել են արդի քաղաքական կյանքի և «միջազգային քաղաքական լանդշաֆտի» ազդեցիկ գործուները: Վերջիններիս միակողմանի ընթանումը ոչ միայն կարող է պարարտ հող դառնալ միջազ-

<sup>6</sup> **Նույն տեղում:** Յեղինակային այս տեսակետի հետ դժվար է համաձայնել քազմաթիվ պատճառներով: Նախ՝ այն պատճառով, որ Արևմուտքին դեռևս չի հաջողվել մշակել և ներդնել ոչ արևմտյան քաղաքակրթությունների մարտահրավերներին հակադրվող համալիր միջոցներ, ինչի հետևանքով ներկայիս քաղաքակրթական հարաբերությունների դաշտը շատ ավելի «գլոբալ պատերազմ» է հիշեցնում: Երկրորդ, դեռևս կայացման փուլում է գտնվում գործառնող «քազմաքաղաքակրթական իրականության» մոդելը: Վերջինիս կարևորությունը հրատապ է հատկապես այն իրողության դիրքերից, որ արդի պայմաններում քաղաքակրթությունների փոխհարաբերության հարցն աստիճանաբար վերածվում է համաշխարհային քաղաքականության կարևորագույն գործոնի: Երրորդ, այդ տրամաբանության օրգանական շարունակություն պետք է համարել նաև այն, որ արևմտյան արժեքների ինտենսիվ ներդրման հետևանքով ավելի է ընդգծվում լոկալ քաղաքականության դերը, որն առաջին հերթին հանդես է գալիս որպես «որևէ ազգի կամ ռասայի պատկանելության քաղաքականություն»: Իսկ նման լոկալ քաղաքականությանը հակադրվող «... գլոբալ քաղաքականությունը»: Խանութինգտոն C. Столкновение цивилизаций. М., 2006, с. 22:

<sup>7</sup> **Тойнби А. Дж.** Цивилизация перед судом истории, с. 130.

գային ռազմավարության ոլորտում, այլև կարող է աշխարհայացքային ու պատճառական բացասական հետևանքներ ունենալ համաշխարհայնացնան պայմաններում<sup>8</sup>: Այդ ամենը նկատի ունենալով՝ խնդրո առարկա հիմնահարցի հավասարակշռված վերլուծական մոտեցումներում փաստվում է, որ «արևմտականացման» մասշտաբային միտումները մշակութային տարբեր իդենտություն ունեցող ժողովուրդների մոտ կարող են անխուսափելի կոնֆլիկտային հետևանքներ ունենալ: Վերլուծական գրականության մեջ մատնանշվում է նաև բացասական այդ հետևանքները հաղթահարելու առաջնահերթությունը՝ «քաղաքակրթությունների երկխոսություն և համերաշխություն հաստատելու» միջոցով: Իսկ այդ գործնքացի իրագործումը հրամայաբար պահանջում է միջքաղաքակրթական հաղորդակցության ոլորտում մարդասիրական այնպիսի գաղափարների մշակում և ներդրում, որոնք այլընտրանքի ձևով կարող են հակադրվել գլոբալացվող աշխարհում տեղ գտած «միհշխանությանը» և «միաձևության հարկադրանքին»:

Ինչպես փաստերն են վկայում, այս հարցում Ա. Թոյնբիի հայեցակարգն աչքի է ընկնում «տարբերակվող առանձնահասկությամբ»: Վստահ, որ հասարակության զարգացումը հանդես է զալիս որպես «լոկալ կամ տեղային քաղաքակրթությունների գումար», նա քննարկվող հիմնահարցի լուծման բանալին որոնում է համանմանության մեթոդաբանության շրջանակներում: Վերլուծաբանը վստահ է, որ ապագա տեսաբանների համար մեր դարաշրջանը հանդես կօգ ծիշտ նույն ձևով, ինչ ձևով որ մեզ համար հանդես է զալիս անցյալի վեց հազարամյա պատմության «մարդկային այն փորձը, որը մենք անվանում ենք քաղաքակրթություն»: Պետք է նկատել, որ այս հարցում դրսևսորվում է հիմնահարցի լուծման արևմտյան փորձը բնութագրող ևս մեկ էական հատկանիշ: Արևմտյան տեսաբանները համոզված են, որ Արևմուտքի կողմից առաջադրված «քաղաքակրթական էքսպանսիան» անխուսափելի հորեն տանում է դեպի հասարակական կյանքի «մարդասիրացում և արդիականացում»՝ այն դեպքում, երբ լոկալ քաղաքականություններն իրենց պրակտիկան համապատասխանեցնում են միայն այդ առանձնահատկություններին: Արդյունքում ասպարեզ են իշնում «քաղաքակրթական և մշակութային ընդհանրություններով միավորված հասարակական նորանոր կառույցներ», իսկ քաղաքակրթական և մշակութային տարբերությունների վրա հենված նախկին կառույցներն անխուսափելի անկում են ապրում: Այսպիսով, «արևմտյան քաղաքակրթական էքսպանսիայի» պատճական դերը համարվում է այն, որ նրա ազդեցությանը քաղաքական սահմանները «Ճգրտվում են» քաղաքակրթական գործոններով<sup>9</sup>: Յիմնահարցի Ա. Թոյնբիի մասին տեսքը կապված է այն բանում, որ

<sup>8</sup> Յամաշխարհայնացման արդի գործնքացներում տեղ գտած այդ երևոյթի պարադիգման մասին տես *Kuhn T. H.* The Structure of Scientific Revolutions. Chicago, 1962, p. 17-18; *Goldstein J. and Keohane R. O.* Ideas and Foreign Policy: An Analytical Framework. Ithaca, 1993, p. 8-17:

<sup>9</sup> Դարաշրջանի ականավոր քաղաքակետներից Ջ. Քիսինցերը համոզված է այն բանում, որ «Քսանմեկերորդ դարի միջազգային համակարգը քաղաքաց կլինի առնվազն վեց հիմնական՝ Սիացյալ և ահանգներ, Եվրոպա, Չինաստան, ճապոնիա, Ռուսաստան և, հնարավոր է, Յնդիաստան, ինչպես նաև բազմաթիվ միջին և փոքր պետություններից», *Kissinger Henry A.* Diplomacy. New York, 1994, p. 23-24: Այս պարագայում դժվար է նկատել նաև այդ պնդման ենթատեքստը՝ այն, որ թվարկված «առաջատար վեց երկրները» ներկայացնում են «գործակցող հիմք տարբեր քաղաքակրթություններ»: Նկատենք, որ առավել հետևողական արևմտյան վեր-

բի լուծումը նույնպես խարսխված է վերոնշյալ ելակետային սկզբունքի վրա: Այդ տեսանկյունից միանգամայն օրինաչափ պետք է համարել տեսարանի այն պնդումը, թե «արևմտյան դրդապատճառների» ազդեցությամբ ապագայի հասարակական կյանքը «քաղաքակրթական այդ եքսպանսիայի հզորությամբ և համընդգրկունությամբ լիովին համեմատական կլինի մեր դարաշրջանին բնորոշ «արևմտյան քաղաքակրթական եքսպանսիայի» հետ: Սակայն նա հավելում է նաև, որ այդ գործընթացը ամենակին էլ չպետք է դրամատիզացնել, որովհետև նմանատիպ իրավիճակները ցիկլային բնույթ են կրում: Եվ այդ համոզմունքը նրան թույլ է տալիս պնդել, որ հետազոտական նպատակների համար քաղաքակրթության դարաշրջանը բնորոշող վերջին վեց հազար տարիները պատճականորեն որքան էլ կարծատև լինեն, այդուհանդերձ ներկայացնում են այն բանի բազում օրինակներ, «որոնք արտաքնապես դրսւորվում են որպես քաղաքակրթությունների բախումների օրինակներ»: «Եթե մենք անդրադառնում ենք Քրիստոսի ծնունդից առաջ վերջին չորս դարերի հունա-հռոմեական աշխարհին, - գրում է Ա. Թոյնբին այդ կապակցությամբ, - մեր ազքին զարնում է հատկապես այդ մեծ եքսպանսիան և դրա ներքափանցման խորությունը: Հունա-հռոմեական պատճության մակերեսի պատերազմները, հեղափոխությունները, տնտեսական ճգնաժամները, որոնք խռովում և մտահոգում էին այդ շրջանում գոյատևման համար պայքարող մարդկանց մտքերը, այսօր մեզ այնքան էլ նշանակալից չեն թվում, որքան Փոքր Ասիան, Ասորիքը, Եգիպտոսը, Բարելոնը, Պարսկաստանը, Յնդկաստանը, Չինաստանն ընդգրկող հունական մշակութային ազդեցությունը»<sup>10</sup>:

Միաժամանակ, իր հայեցակարգային մոտեցումները հիմնավորելու միտունով, Ա. Թոյնբին մեկ անգամ ևս շեշտադրելով ցիկլային զարգացման առաջնությունը և քաղաքակրթությունների բախման օրինաչափությունները լուսաբանելով այդ ոհիքերից, պնդում է, որ այլ քաղաքակրթությունների վրա հունա-հռոմեական քաղաքակրթության ազդեցությունը պատճական արժեք ունի բացառապես ցիկլային հարաբերությունների հանատեքստում, այսինքն «... հունա-հռոմեական քաղաքակրթության վրա այլ քաղաքակրթությունների հակագրեցության տեսքով»<sup>11</sup>: Այս հարցում վերլուծաբանի տեսակետներն անհնար է ամբողջությամբ ներկայացնել, եթե զանց առնենք նրա հայեցակարգում «լոկալ քաղաքակրթություններին» վերագրվող պատճական դերը: Նա համոզված է, որ այլ քաղաքակրթությունների կողմից հունա-հռոմեական քաղաքակրթության վրա ձեռնարկած «հակահարձակումը նաև ակիրեն իրականացվել է ճիշտ այն ձևով, ինչպիսին որ եղել է հունա-հռոմեական աշխարհի հարձակումը»: Քաղաքակրթությունների փոխհարաբերության նշանակալի գործությունը և հարկադրանքի պահը», Ա. Թոյնբին հիմնահարցի լուսաբանության գոր-

լուծաբանները փաստում են նաև հակառակ տեսակետը: Ս. Յանտինգտոնը, օրինակ, համոզված է, որ այս պարագայում թեև «Սառը պատերազմին բնորոշ ռազմական բլումներին փոխարինելու են գալիս մշակութային ընդհանրությունները, բայց դրա հետևանքով քաղաքակրթությունների շփման գծերն աստիճանաբար վերածվում են գլորալ քաղաքականության կոնֆլիկտների առաջավոր գծի»:

<sup>10</sup> **Тойнби А. Дж.** Цивилизация перед судом истории, с. 131.

<sup>11</sup> **Նույն տեղում:**

ծում կարևորում է հատկապես այն խաղաղ գործնթացների դերը, որոնք միտված էին նվաճել «ոչ թե ամրոցներ և պրովինցիաներ, այլ՝ **մտքեր և սրտեր**»: Ընդորում, նա հավաստում է, որ «հետադարձ ներգործությունը» նույնպես սահմանափակված է «հոգևոր-մշակութային» սահմաններով, որի արդյունքում «Այդ հարձակումն իրականացրեցին հունա-հռոմեական քաղաքակրթության կողմից ուժով զաված և հպատակեցրած տարածքներում ձևավորված նոր կրոնների քարոզիչները»<sup>12</sup>: Այդ ամենով հանդերձ պետք է փաստել նաև, որ Ա. Թոյնբին քաղաքակրթությունների բախման գործնթացն ամենակին էլ չի հանգեցնում միայն կրոնների «արտաքին», քարոզական ընդդիմությանը: Վերլուծաբանը գտնում է, որ կրոնական «հակազդեցությունը» այլ բան չէ, քան տեղական, լոկալ համակարգերի նկատմամբ «համընդհանրության» հաղթանակ: Նա այդ տեսակետն առաջադրում է գերազանցապես այն նպատակով, որպեսզի հիմնավորի «համաշխարհային առաքելություն» իրականացնող «ժամանակակից բարձրագույն չորս կրոնների»՝ քրիստոնեության, իսլամի, հինդուիզմի և Յեռավոր Արևելքուն գերիշխող բուդդայականության մահյանական տարատեսակի, այլ կերպ ասած՝ «հունահռոմեական» և նշված չորս տարրեր քաղաքակրթությունների «քախման» իր տեսակետը<sup>13</sup>: Եվ քաղաքակրթությունների այդ «հանդիպումն» ու բախումներն էլ նրա կողմից որակվում է որպես հունա-հռոմեական քաղաքակրթության «հեռանկարի առավել նշանակալից պահ», որի համակարգում հեղինակի կողմից գնահատվում են ոչ այնքան «քաղաքական և տնտեսական արդյունքները», որքան «կրոնական պլանի երկարաժամկետ հետևանքները»: Իսկ վերջինս համանմանության դիրքերից նա արժնորում է «ժամանակի շկալայի տեսանկյունից» և նույնացնում ժամանակակից արևմտյան քաղաքակրթական էքսպանսիայի հետ<sup>14</sup>:

Դարձ ենք համարում մատնանշել, որ այս հարցում ևս Ա. Թոյնբիի տեսակետը լիովին համահունչ է արևմտյան տեսական մտակառույցներին: Վկայությունն այն է, որ մերօրյա քաղաքագետներից շատերը ևս քաղաքակրթությունների փոխհարաբերության համատեքստում հասարակության պատմությունը դիտարկելիս անվերապահ պնդում են, որ «Մարդկային պատմության ազդեցիկ քաղաքակրթությունները գերազանցապես նույնացվել են աշխարհի մեջ կրոնների և ազգային ու լեզվական ընդհանուր պատկանելության հետ...»<sup>15</sup>: Կասկածից վեր

<sup>12</sup> **Նույն տեղում**, էջ 131:

<sup>13</sup> **Նույն տեղում**, էջ 132: Յննտ.՝ «Քաղաքակրթությունը բնորոշող օբյեկտիվ գործններից ամենաազդեցիկը, թերևս, կրոնն է», **Խանուցու C.** Столкновение цивилизаций, с. 47: Յետարքական է նաև Ա. Թոյնբիի այս պնդումը, թե «Քրիստոնեությունը և իսլամը ձևավորվել են որպես ասորական իրականության այլընտրանքային պատասխաններ հունա-հռոմեական ներխուժմանը. քրիստոնեությունը՝ որպես պատասխան առանց հարկադրանքի, իսլամը, հակառակը, որպես բռնածնշումներով պատասխան: Մահյանական բուդդայականությունը և հինդուիզմն նույնպես մեղմ և բուռն պատասխաններ են, ինդկական իրականության պատասխանը նույն հունա-հռոմեական մարտահրավերին», **Առյան տեղում**:

<sup>14</sup> Տե՛ս **Топчев А. Дж.** Цивилизация перед судом истории, с. 132.

<sup>15</sup> **Bogemen A. D.** Civilization Under Stress, p. 1: Տե՛ս նաև **Tiryakian E. A.** Reflections on the Sociology of Civilization // "Sociologikal Analisis", N 35, 1974, p. 125: Բայց չպետք է մոռանալ նաև այն փաստը, որ տարրեր դավանանքների առկայությունը ոչ միայն կարող է լինել համագոր-

է, որ հասարակության պատմության ողջ ընթացքում քաղաքակրթական համակարգերը հանդես են եկել իդենտության բարձրագույն աստիճանով։ Այդ տեսանկյունից միանգամայն բնական պետք է համարել, որ սոցիումներն ամենից առաջ քաղաքակրթությունն ընկալում են որպես մշակութային ամբողջություն։ Այդ կապակցությամբ միանգամայն ընդունելի կարելի է համարել քննարկվող փոխհարաբերությունը լուսաբանող այն մեկնաբանությունը, ըստ որի «Եվ քաղաքակրթությունը, և մշակույթը սերտորեն աղերսվում են ազգաբնակչության ապրելակերպի հետ։ Իսկ քաղաքակրթությունը վառ արտահայտված մշակույթը է։ Երկուսն էլ տվյալ մշակույթը ներկայացնող սերունդների կողմից ներառում են առաջնահերթ նշանակություն ունեցող «արժեքներ, նորմեր, հոգեկերտվածք և օրենքներ»<sup>16</sup>։ Այո՛, քաղաքակրթությունը նաև վառ արտահայտված մշակույթ է, բայց, միաժամանակ, ոչ միայն մշակույթ։ Ցանկացած հասարակության համար քաղաքակրթությունն անուրանալի միավորնան գործոն է։ Բայց չպետք է մոռանալ նաև, որ այդ գործառույթի շրջանակներում ցանկացած քաղաքակրթական համակարգ սոցիումների կյանքում անհրաժեշտաբար կատարում է նաև արենակցական կապի, լեզվի, կրոնի և կենցաղի միավորնան գործոնի դեր<sup>17</sup>։

Եվ չնայած ակնհայտ այդ իրողությանը, արևմտյան տեսաբաններից շատերի նման Ա. Թոյնբին ևս խսպառ բացառում է քաղաքակրթական համակարգերի բազմագործոն եւթյունը։ Եվ ինչպես փաստերն են վկայում, վերլուծական այդ մոտեցումը հետամուտ է իհմնահարցի միանգամայն միտված լուծնան, այն է՝ այդ համակարգերի գործառնական դերը հանգեցնել «պարզ փոխանակության»։ Այդ պնդման վկայությունը Արևմուտքի նկատմանը «ռուսական և հեռավորակեյան էքսպանսիայի» Ա. Թոյնբիի տեսակետն է։ Այդ գործընթացը դիտարկելով «քաղաքակրթությունների բախման» դիրքերից, վերլուծաբանը հանգում է այն հետևողական, որ «Ուսւաներն ընկալեցին արևմտյան աշխարհիկ սոցիալական փիլիսոփայությունը, նարբազմը. նույն հաջողությամբ մենք մարդսիզմը կարող ենք անվանել քրիստոնեական հերձված, քրիստոնեության գործից պոկված էզ և իբրև միակ ծշմարիտ մեկնաբանվող Ավետարան։ Ուսւաներն արևմտյան հերետիկոսական այդ կրոնն ընդունելով, այն ձևակիրական իբրև իրենցը և այժմ, հակառակը, այն փոխանցում են մեզ։ Սա Արևմուտքի դեմ հակահարձակնան առաջին կրակոցն է, բայց չի բացառվում նաև, որ կոնունիզմի տեսքով ռուսական համազարկը մեզ թվա ոչ էական այն պարագայում, երբ իրենց հերթին արևմտյան մարտահրավերին կպատասխանեն Յնդկաստանի և Չինաստանի առավել հզոր քաղաքակրթությունները, որոնք հավանաբար շատ ավելի մեծ ազդեցություն կունենան»<sup>18</sup>։

Անշուշտ, քաղաքակրթությունների փոխհարաբերության և բախման համատեքստում այդ համակարգերը առաջին հերթին հանդես են գալիս մշակութային բարձրագույն արժեքների որակով։ Սակայն այդ հարցի վերլուծական դաշտում անհրաժեշտաբար պետք է քննարկվի նաև այն փաստը, որ ցան-

ծակցող, այլ նաև կարող է արյունալի պատերազմների պատճառ դառնալ։

<sup>16</sup> Bozeman A. D. Civilization Under Stress, S. 1.

<sup>17</sup> Хантингтон С. Столкновение цивилизаций, с. 47.

<sup>18</sup> Тойнби А. Дж. Цивилизация перед судом истории, с. 132.

կացած քաղաքակրթական համակարգի «ժամանակային սահմանները», այսինքն՝ ձևավորման կոնկրետ սկզբը, առավել ևս գործառնական առանձնահատկությունները և դրանց կանխատեսելի վերջը «անչափելի են»: Այստեղ անառարկելի է միայն այն փաստը, որ քաղաքակրթությունները նույնպես ժամանակային են ու անցողիկ: Նրանք կարող են գոյատեսել չափազանց երկար, կարող են բարեշրջվել, հարմարվել կամ հակադրվել իրականությանը, կարող են նաև հանդես գալ որպես մարդկային ասոցիացիաների ամենակայուն տարրերի, հետևաբար՝ ամենահարատևող իրականության որակով: Եվ այդուհանդերձ, քաղաքակրթությունները ամենսին ել բնութագրելի չեն քաղաքական որակներով, հետևաբար չունեն և չեն կարող ունենալ նաև պետքաղաքական որոշակի գործառնություններ: Իսկ դրանից հետևում է, որ քաղաքակրթություններն ամենսին ել «մտահոգված» չեն հասարակական կամ տնտեսական կարգի պահպանության հիմնախնդիրներով՝ այն պարզ պատճառով, որ նրանց համար բնութագրական որոշիչ են մշակութային որակները: Կասկածից վեր է նաև, որ վերոնշյալ «մշակութային որակների» ազդեցությամբ ել, բնութագրական տարրերություններով հանդերձ, հասարակությանը հայտնի քաղաքակրթությունները աչքի են ընկնում նաև ընդհանրական գծերով: Յենց այդ ընդհանրություններն ել թույլ են տալիս հայեցակարգային մետեցումներ մշակել քաղաքակրթությունների հնարավոր երկխոսության, հավասարապես նաև բախումների վերաբերյալ: Եվ այդ հարցում հասարակական պրակտիկան ինքն է հարկադրական ծզգրտումներ կատարում «քաղաքակրթությունների բախնան» Ա. Թոյների հայեցակարգում:

Եվ ամենսին ել ոչ միայն այն պատճառով, որ հասարակության մասին Ա. Թոյների հայեցակարգի հիմքում ընկած է զարգացման շրջապատճետային մոդելը: Պարզունակ դիտարկման պարագայում այդ մոդելը ևս տեղ ունի հասարակական զարգացման գործընթացներում, բայց ամենսին ել վճռական և որոշիչ չէ: Արևմտյան սոցիոլոգներից և քաղաքագետներից շատերին բնորոշ հասարակության շրջապատճետային զարգացման միակողմանի և ծայրահետ ընթռննան մեթոդաբանական հիմքում ընկած «ստատիկ վիճակների» բացարձակեցումը Ա. Թոյներին ևս հանգեցրել է այն հետևողանք, որ «քաղաքակրթություն» ասելով պետք է հասկանալ «սեփական երկրի պատմությունը առանձնության մեջ» ուսումնասիրելու համար անհրաժեշտ «պատմական նյութի նվազագույն բլոկը»: Նա թեև հավելում է նաև, որ «պատմական նյութի այդ նվազագույն բլոկը», որը բնորոշվում է «քաղաքակրթություն» հասկացությամբ, որոշակի «ասոցիացիաներ է արթնացնում» կրոնի, ճարտարապետության, գեղանկարչության, բարոյականության և բարքերի վերբերյալ<sup>19</sup>, սակայն այդ բոլոր տարրերը բնութագրում է որպես «ստատիկ իրավիճակների» դրսևորումներ: Այդ հիման վրա էլ կառուցվում է քաղաքակրթությունների բախնան Ա. Թոյների հայեցակարգը: Նա համոզված է, որ այդ ոլորտում առաջնային և որոշիչ են ոչ թե կոնֆլիկտային բախումները, այլ ամբողջության մեջ վերցրած քաղաքակրթության և մասնավորապես մշակութային արժեքների խաղաղ և անհակասական «փոխանակության հաճախականությունը»: Այնինչ հասարակական պրակտիկան ապացուցում է նաև հակառակը:

<sup>19</sup> Տես նոյն տեղում, էջ 133-134:

«Քաղաքակրթությունների բախման» Ա. Թոյնբիի հայեցակարգի մեթոդաբանական անհետևողականությունը կարելի է փաստել XX դարավերջին քաղաքակրթությունների և սոցիումների «ստատիկ իրավիճակի» իրատեսական գնահատման արևմտյան մեկ այլ քաղաքագետի՝ Ս. Յանտինգտոնի մոտեցմամբ: Նա մասնավորապես մատնանշում է, որ քաղաքական կյանքում սառը պատերազմի ավարտի հետ կապված էլֆորիան թեև «ներդաշնակության հոլյսեր» ծնեց, սակայն շատ շուտով ակնհայտ դարձավ, որ դա պարզապես պատրանք էր: Ս. Յանտինգտոնն ամենակին չի մերժում, որ «աշխարհը այլ է 1990-ական թվականների համեմատությամբ», բայց հավելում է նաև, որ այն ամենակին էլ «ավելի խաղաղ և կանխատեսելի չի դարձել»: Ու թեև քաղաքագետը դարաշրջանը բնութագրող փոփոխությունները համարում է անխուսափելի, սակայն հավելում է նաև, որ սոցիումներում տեղ գտած տեղաշարժերը ակնհայտորեն ապացուցում են, որ այդ ոլորտում ցանկալի առաջնթաց դեռևս չի նկատվում: Դա է պատճառը նաև, որ ակնկալվող «ներդաշնակության պատրանքը» արագորեն հօդս ցնից, ինչին մեծապես նպաստեցին ազգամիջյան կոնֆլիկտները, «ազգային և կրոնական գոտումները», կրոնական արմատականության աննախադեպ աճը, Արևոտքի, հավասարապես նաև արևմտյան քաղաքակրթության նկատմամբ ազգակրոնական ինքնության վրա հենված «լոկալ քաղաքակրթությունների» արմատական և անհանդուրժողական դիրքորոշումը, ինչպես նաև հասարակական-տնտեսական և քաղաքական այլ գործոններ<sup>20</sup>:

## A. ДЖ. ТОЙНБИ О СТОЛКНОВЕНИИ ЦИВИЛИЗАЦИЙ

*A. A. KALASHYAN*

В статье на основе анализа фактического материала показывается, что А. Дж. Тойнби проблему "столкновения цивилизаций" представляет в духе "круговорота локальных цивилизаций". По мнению английского теоретика, специфика "столкновения цивилизаций" проявляется в процессе взаимоотношений "своеобразных и замкнутых (локальных) цивилизаций". В данном контексте "столкновение цивилизаций" трактуется мыслителем как лишенное всяких конфликтов "мирное сосуществование", как "гармония вызовов и ответов", которое обуславливает возникновение, рост, падлом и разложение цивилизаций.

Показывается также, что по мнению А. Дж. Тойнби, основой и движущей силой мирного и гармоничного сосуществования современных цивилизаций является "экспансия западной цивилизации".

## A. J. TOYNBEE ABOUT COLLISION OF CIVILIZATIONS

*A. A. KALASHYAN*

?n the basis of the analysis of an actual material the article shows that A. J. Toynbee the problem of "the clash of civilisations" represents in the spirit of "circulation of local civilisations". According to the English theorist, specificity of "the clash of civilisations" is shown in the course of mutual relations of "the specific and closed (local) civilisations". In the given context "the clash of civilisations" is interpreted by the scholar as "peaceful co-existence" deprived of any conflict, as "harmony of calls and answers" which

<sup>20</sup>Տե՛ս **Хантингтон С.** Столкновение цивилизаций, с. 29:

causes occurrence, growth, a break and decomposition of civilisations.

It is shown also that according to A. J. Toynbee, a basis and a motive for peaceful and harmonious coexistence of modern civilisations is "the expansion of the western civilisation".

## ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՐՅԵՍԱՎՈՐՆԵՐԻ ՇԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Լ. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի  
քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի հայցորդ,  
ԿԳՆ ԿԱԻ Կուտայքի մասնաճյուղի գլխավոր մասնագետ,  
պատմության և հասարակագիտության մեթոդիստ

Ժողովրդավարության ուղին որդեգրած երկրներում իշխանություն-հասարակություն կապի ձևավորմանն ու երկխոսությանն է ուղղված պետության մեջ տարրաբույթ քաղաքական և սոցիալական ինստիտուտների կայացումը: Դրանք հնարավորություն են տալիս հանրային ինստիտուտներին ներգրավվելու հանրային կառավարմանը:

Դիտարկենք արիեսատակցական միությունների դերն ու նշանակությունը հասարակության կյանքում:

Այս համատեքստում հետաքրքիր զարգացում են ապրել հայ հասարակությունը, սոցիալական համակարգը: Արիմիությունների առաջացումը էապես կապված էր հասարակության մեջ արդյունաբերական հարաբերությունների զարգացման հետ, որոնք պաշտպանում էին աշխատողների շահերը: Իրենց իրավունքների պաշտպանության համար աշխատողները ստեղծում էին արիմիություններ, որոնք գործում էին պետական իշխանությունից անկախ և հետևուն, որ չունահարվեն աշխատողների իրավունքները:

Ժամանակակից հասարակություններում, հատկապես Արևմուտքում, որտեղ դասական իմաստով ձևավորվում է քաղաքացիական հասարակություն, արիմիությունների դերը նշանակալից <sup>1</sup>:

Ժամանակակից արևմտյան երկրների արիմիությունների և քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների փորձի հաշվառման՝ դիտարկենք հայրենական արիմիությունների նախատիպն ու դրանց կառուցվածքը:

<sup>1</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Ալեքսանյան Ա.** Գործընկերությունը քաղաքացիական սոցիալական պատասխանատվության համակարգում // Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, 2010, N 132.6, էջ 24-36; **Շույնի**՝ Սոցիալական գործընկերության հարցի շուրջ // Բանբեր Երևանի համալսարանի, Սոցիոլոգիա, տնտեսագիտություն/, 2010, N 132.5, էջ 5-14, **Շույնի**՝ Ենթադրիրդային արիմեստակցական միությունները քաղաքացիական ժողովրդականության գործոն // Գիտաժողովի նյութեր: Երևան, ԼՂՀ ԿԳ, Ս. Մաշտոց համալսարան, 2011, էջ 20-29: